

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՔՈԹԱՆՋՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՆԻԿՈԼԱՅԻ**

**ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ  
(XIX դ. երկրորդ - XX դ. առաջին կես)**

**ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,  
դիզայն» մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2014**

---

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**КОТАНДЖЯН ГАРЕГИН НИКОЛАЕВИЧ**

**ХУДОЖЕСТВЕННОЕ НАСЛЕДИЕ ИМПРЕССИОНИЗМА  
И АРМЯНСКАЯ ЖИВОПИСЬ**

**(вторая половина XIX - первая половина XX веков)**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени**

**кандидата искусствоведения по специальности**

**17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное  
искусство, дизайн”**

**ЕРЕВАН – 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ **ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ղազարյան Վիգեն Հովհաննեսի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր  
**Դրամբյան Իրինա Ռուբենի**  
արվեստագիտության թեկնածու, դոցենտ  
**Փիլիպոսյան Հասմիկ Սուրենի**

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. մայիսի 29-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Սաստրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - член-корреспондент НАН РА  
**Казарян Виген Оганесович**

Официальные оппоненты - доктор искусствоведения  
**Драмбян Ирина Рубеновна**  
кандидат искусствоведения, доцент  
**Пилипосян Асмик Суреновна**

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 29-го мая 2014г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 29-го апреля 2014г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор искусствоведения, профессор

**Асатрян А. Г.**

## ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Թեմայի արդիականությունը:** Արվեստի պատմության ընթացքը պարբերաբար, տևական խնորումներից հետո, ապրում է շրջադարձային վերափոխումների փուլեր, որոնք գեղարվեստական արժեքների մեր ընկալումների արմատական վերանայման անհրաժեշտություն են ծնում: Հենց այդպիսի դարակազմիկ շրջադարձի սկիզբը դրվեց ֆրանսիական կերպարվեստում իմպրեսիոնիզմի սկզբնավորումով, որը յուրովի վերակազմավորեց ողջ արևմտյան գեղարվեստական ավանդույթը: Իմպրեսիոնիզմը ոչ միայն վերագինեց գեղարվեստական արտահայտչամիջոցների պաշարը նոր հնարավորություններով, այլև՝ անհրաժեշտություն ստեղծեց վերանայելու գեղարվեստական ստեղծագործությունների գնահատման ավանդական գեղագիտական չափանիշները: Նշված զարգացումները և նրա ազդեցությունը տարբեր ազգերի և երկրների գեղարվեստական ավանդույթների կազմավորման գործում մշտապես արդիական է և արվեստաբանների ուսումնասիրության առարկա: Առավել ևս մեզանում վաղուց էր հասունացել մնամ գործընթացի անհրաժեշտությունը, քանի որ ժամանակին հասարակաքաղաքական բազում խոչընդոտներ դժվարացնում կամ պարզապես անհնարին էին դարձնում դրա իրականացումը: Իրավիճակը փոխվեց խորհրդային կարգերի վերջին շրջանում: Սակայն, մինչ օրս էլ տվյալ հարցի լուսաբանումը մնում է հայ կերպարվեստի ուսումնասիրության, ազգային գեղանկարչական դպրոցի ձևավորման, նրա բնութագրման ու արժևորման կարևորագույն խնդիրներից:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության գլխավոր նպատակն է Նոր ժամանակաշրջանի եվրոպական կերպարվեստի ամենամշանակալի գեղարվեստական երևույթներից մեկի՝ իմպրեսիոնիզմի գեղարվեստական ժառանգության ստեղծագործական յուրացման օժանդակությամբ, հայ արվեստում՝ սեփական գեղանկարչական դպրոցի ձևավորման ու կայացման կարևորագույն խնդրի ուսումնասիրումը:

Խնդիր է դրվում.

➤ արևմտյան կերպարվեստի լայն համայնապատկերում՝ Նոր շրջանի կերպարվեստի գեղարվեստական հիմնախնդիրների համատեքստով, դիտարկել մաս հայ Նոր ժամանակաշրջանի գեղանկարչությունը.

➤ ներկայացնել թե իմպրեսիոնիզմի գեղարվեստական ուղղությանը մերձեցնող ընդհանրագծերը, թե՛ մի շարք այնպիսի առանձնագծեր, որոնք բնորոշ են զուտ հայ ազգային արվեստին.

➤ հայ գեղանկարչությանը հատուկ ոճական և գեղարվեստակերպարային բնորոշումը սահմանել հնարավորինս մեծաքանակ ստեղծագործությունների ընդգրկմամբ և վերլուծությամբ.

➤ ընդգծված հստակությամբ մեկնաբանել յուրաքանչյուր գեղանկարչի անհատական գեղարվեստական ծեռագիրը և կերպարային արտահայտչալեզուն:

---

<sup>1</sup> Հիշեցնենք ընդամենը մեծ արվեստաբան Լիոնելլո Վենտուրիի հետևյալ միտքը՝ իմպրեսիոնիստների գեղանկարչությունը խթան հանդիսացավ ճաշակի պատմության մեծագույն փոփոխություններից մեկի համար (*Вентури Лионелло, От Мане до Лотрека, Москва, 1958, с.5*):

**Աշխատության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ

➤ արվեստագիտության մեջ, տեսական բնույթ կրող, կոնկրետ խնդրի՝ իմպրեսիոնիզմի գեղարվեստական սկզբունքների տեսանկյունից, ուսումնասիրության առարկա է դարձել հայ գեղանկարչությունը.

➤ զուգահեռներ են անցկացվում հայ գեղանկարիչների ստեղծագործությունների և նրանց արտասահմանյան «գործընկերների» աշխատանքների միջև.

➤ դիտարկվում է Յովհաննես Այվազովսկու ժառանգությունը իմպրեսիոնիստական գեղանկարչության հայտնագործությունների համատեքստում, արվեստագիտական քննության ենթարկելով և բացահայտելով նրանց զուգահեռականությունը.

➤ հանգամանակից և նպատակային ուսումնասիրվում են Եղիշե Թադևոսյանի իմպրեսիոնիստական տեսողության զարգացման և ձևավորման առանձնահատկությունները.

➤ իմպրեսիոնիզմի գեղարվեստական սկզբունքների տեսանկյունից առավել մանրագին և առավել մեծաքանակ երկերի ներգրավմամբ է վերլուծվում Սեդրակ Առաքելյանի գեղանկարչական ժառանգությունը.

➤ իմպրեսիոնիստների գեղարվեստական նորարարությունների առավել համակողմանի և բազմասպեկտ կիրառման մեկնաբանությունն է տրվում Վահրամ Գայֆեշյանի ստեղծագործության առնչությամբ.

➤ մանրամասն քննվում է փարիզյան շրջանում Սարտիրոս Սարյանի արվեստում կատարված արմատական փոփոխությունների էությունն ու նշանակությունը՝ պայմանավորված իմպրեսիոնիզմի և նկարչի ստեղծագործական զարգացման նախադրյալների փոխկապակցված դերով.

➤ դիտարկվում է Մարտիրոս Սարյանի փարիզյան և հետփարիզյան շրջանի աշխատանքների ինչպես «ժառանգականությունն», այնպես էլ էական տարբերությունները ֆրանսիական իմպրեսիոնիստների ստեղծագործություններից.

➤ Յովհաննես Տեր-Թադևոսյանի արվեստը հանգամանակից շոշափվում է իմպրեսիոնիստների պլեներային հայտնագործությունների լույսի ներքո.

➤ իմպրեսիոնիստների պլեներային սկզբունքների համատեքստով է դիտարկվում Գաբրիել Գյուրջյանի բնանկարչական ժառանգությունը:

➤ արժևորվում և իմաստավորվում է Գաբրիել Գյուրջյանի ստեղծած Շրջիկ արվեստանոցի պատմական դերը հայ արվեստի համար

**Աշխատության մեթոդաբանությունը:** Գեղարվեստական ստեղծագործության ընկալման մեխանիզմները չափազանց բարդ են և դեռևս մինչև վերջ չպարզաբանված: Սակայն դրանք մեկնելու միջոցներն արվեստագիտության բուն խնդիրներից է, որի իրականացման համար բավական լայն ու բազմակողմանի լեզու և եղանակներ են ներգրավվում: Ընթերցողի հետ հաղորդակցվելու մեթոդները նույնպես դժվար է հստակ բնորոշել, քանի որ դեռևս չեն ստեղծվել և չեն կայացել հասկացությունների, հետևաբար՝ տերմինաբանական ապարատի հստակ և ճշգրիտ գործիքներ: Ամեն դեպքում, փորձենք սահմանել մեր կողմից կիրառված եղանակների գոնե մի մասը: Դրանք մոտավոր կարելի է բնորոշել որպես՝ պատմագեղարվեստական,

պատմահամեմատական, ոճաբանական, ոճաձևաբանական, ոճահամեմատական և ձևաբանական-տեսողական վերլուծական եղանակներ:

**Աշխատության գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բուհերի դասավանդման գործընթացում թե դասախոսներին, թե ուսանողներին, ինչպես և արվեստի հարցերով հետաքրքրվող ընթերցողների առավել լայն շրջանակներին:

**Աշխատության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում:

**Աշխատության կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է առաջաբանից, 9 գլուխներից և եզրակացություններից, ինչպես և՛ գրականության ու վերատպությունների ցանկերից: Աշխատությանը կցված է նաև գունավոր վերատպությունների շարք:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ**

### **ԱՌԱՋԱԲԱՆ**

Առաջաբանում հանգամանորեն շարադրված են աշխատանքի նպատակը, առաջարկված թեմայի արդիականությունը, հիմնավորվում է խնդրի լուծմանն ուղղված անհրաժեշտ մոտեցումը՝ նկարիչների խմբի ընտրությունը և տեսական այն հարցադրումները, որոնց պատասխանները կոչված են լույս սփռել ատենախոսության հիմնական նպատակին:

Ըստ առաջադրվող խնդրի պահանջի մեզ առավել նպատակահարմար թվաց իմպրեսիոնիզմի սկզբունքների տեսանկյունից առանձնացնել հայ գեղանկարիչների այն խմբին, որոնց գեղարվեստական ոճի, գեղանկարչական սկզբունքների ու եղանակների ձևավորման գործում իմպրեսիոնիզմի նշանակությունն առանցքային և արմատական էր: Մեր կարծիքով նրանց արվեստի դիտարկումը միանգամայն համակարգված և լիարժեք արտացոլում է իմպրեսիոնիզմի դերի ամբողջական պատկերը դիտարկվող ժամանակաշրջանի հայ կերպարվեստում: Այս խմբի մեջ ընդգրկված գեղանկարիչներն են Հովհաննես Այվազովսկին, Եղիշե Թադևոսյանը, Սեդրակ Առաքելյանը, Վահրամ Գայֆեջյանը, Մարտիրոս Սարյանը, Հովհաննես Տեր-Թադևոսյանը և Գաբրիել Գյուրջյանը:

### **ԳԼՈՒԽ 1**

#### **ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

Այստեղ ընդհանուր ակնարկով անդրադարձ է արվում պատմական այն իրավիճակին, որի ներգործության պայմաններում ընթացավ հայ Նոր ժամանակի կերպարվեստի կայացումը: Պարզաբանվում է այն առանցքային նշանակությունը, որն ունեցավ իմպրեսիոնիստական գեղանկարչությունը հայ նկարիչների ստեղծագործական ձևավորման գործում: Նաև նշվում է, XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռուսական գեղանկարչության և ռուս գեղարվեստական միջավայրի շոշափելի դերը, որպես, մասնավորաբար, կապող օղակ, հայ գեղանկարիչների ստեղծագործական կողմնորոշումներում, քանի որ ոչ միայն

մեր ընտրած յոթ, այլև՝ հայ գեղանկարիչների մի ստվար խմբի ստեղծագործական ձևավորումն ընթացել է Ռուսաստանի գեղարվեստական կրթօջախներում:

Հակիրճ և ընդհանրացված դիտարկելով գրեթե բոլոր խոշոր հայ գեղանկարիչների անհատական ստեղծագործական բնութագիրը և ներկայացնելով նրանց արվեստն իմպրեսիոնիզմի գեղարվեստական ուղղությանն առնչվելու յուրահատկությունները, շեշտվում է, մինևույն ժամանակ, իմպրեսիոնիզմի որոշիչ, կամ էլ էական նշանակությունն այն հայ գեղանկարիչների ստեղծագործական անհատականության ոճաձևավորման գործում, որոնց մեք առանձնացրել էինք դիտարկվող խմբի շրջանակներում:

Առանձնահատուկ ընդգծվում է դասական գեղանկարչական ավանդույթի կարևոր դերն իմպրեսիոնիզմի համար և վերջինիս ժառանգականությունը դասական ավանդույթից: Այդ առումով տրամաբանական է դառնում նաև անցումն Այվազովսկու արվեստի դիտարկմանը:

## ԳԼՈՒԽ 2

### ՊԼԵՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԸՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Հովհաննես Այվազովսկու (1817-1900)** երկարամյա և բեղմնավոր ստեղծագործական տարիները համընկնում են Նոր ժամանակների արվեստի պատմության ամենահետաքրքիր և գեղարվեստական հայտնագործություններով հարուստ ժամանակաշրջանի հետ, երբ իր ավարտին էր հասնում դեռևս Վերածննդի դարաշրջանից մշակվող եվրոպական գեղանկարչական համակարգը, որի հիմքում ընկած էր շրջապատող աշխարհի երևույթներն առավելապես ճշմարտացի և ռեալիստորեն արտացոլելու խնդիրը: Գեղանկարչական այդ համակարգը զարգացման ավարտին հասավ իմպրեսիոնիստների մշակած գեղարվեստաարտահայտչական լեզվի մեջ:

Գեղարվեստական այդ բոլոր որոնումներում կենտրոնական խնդիրներից էր պլեների կամ, այլ կերպ ասած, լուսաօդային միջավայրի երևույթների արտացոլման հարցը:

Այվազովսկու հատուկ հետաքրքրությունը դեպի պլեների պրոբլեմը տրամաբանորեն հիմնավորված էր նաև նրա ընտրած թեմատիկայով, որտեղ նկարների հիմնական հերոսներն են բնության երկու հզոր տարրերը՝ երկինքը և ծովը: Դրանք հիմնականում պատկերված են բուռն փոփոխության և անընդմեջ շարժման պահերին, որոնց արտահայտչականությունը առավել ուժեղանում է լույսի՝ նրա նկարների ևս մի «հերոսի» կախարդական ուժով: Քննարկելով Այվազովսկու գեղանկարչությունն այս դիտակետից ակամա պահանջ է առաջանում զուգահեռներ անցկացնելու իմպրեսիոնիզմի ֆրանսիական վարպետների աշխատանքների հետ, որոնց համար լուսաօդային միջավայրի պրոբլեմը ստեղծագործական որոնումների որոշիչ տարրերից էր: Եվ, անցկացնելով այս համեմատությունը տեսնում ենք, որ շատ առումներով մեր գեղանկարչի կողմից լուծվող լուսագունային կերպավորման խնդիրները, ինքնուրույն և անկախ, զուգահեռ էին ընթանում, իսկ երբեմն էլ, նույնիսկ կանխորոշում ֆրանսիական իմպրեսիոնիստների պլեներային հայտնագործությունները (ամենաբնորոշ օրինակներից են՝ *9-րդ ալիք (1850թ.)*,

*Ծով. Կոկտեբել (1853թ.), Օդեսան ծովից (1865թ.), Նեապոլի ծովածոցը մառախլապատ առավոտյան (1874թ.)* և շատ ուրիշներ:

Միևնույն ժամանակ, գեղարվեստական խնդիրների որոշ մնացորդներ հանդերձ, դրանց լուծումները նրա արվեստում էականորեն տարբերվում էին իմպրեսիոնիստների մշակած գեղանկարչական սկզբունքներից: Այսպես, Այվազովսկին մշակած գեղարվեստական խնդիրները լուծում է միշտ մնալով եվրոպական գեղանկարչության ավանդական գեղարվեստական համակարգի սահմաններում, միայն թարմացնելով վերջինս արտահայտչական նոր եղանակներով:

Հրաժարվելով բնությունից անմիջականորեն պատկերներ առնելու, այն է՝ իմպրեսիոնիստների որդեգրված եղանակից, Այվազովսկին մշակեց իր իսկ սեփական, հիշողության և երևակայության վրա հիմնված նկարելաեղանակը, որը թեև հակառակ էր իմպրեսիոնիստների աշխատանքային մեթոդին, սակայն համծիրն նկարչի արտառոց ունակությունների, գեղարվեստական կերպարի կենդանությանը, ճշմարտացիությանը չէր զիջում վերջիններիս ստեղծածներին:

Գեղարվեստական իր անկրկնելի ճանապարհով, Հովհաննես Այվազովսկին 19-րդ դարի մեծագույն նկարիչ «միայնակներից» է: Միևնույն ժամանակ, Այվազովսկու գեղարվեստական աշխարհը եվրոպական գեղանկարչության պատմության հրաշալի էջերից է:

### **ԳԼՈՒԽ 3 ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՂԻՇԵ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Իմպրեսիոնիզմի փորձին առավել հիմնավոր է մոտեցել ականավոր գեղանկարիչ **Եղիշե Թաղևոսյանը** (1870-1936): Գեղարվեստական կրթություն ստանալով Մոսկվայում՝ ռուսական արվեստի առաջադեմ վարպետների միջավայրում, երիտասարդ գեղանկարիչը միանգամից չընկալեց իմպրեսիոնիստների գեղարվեստական նվաճումների կարևորությունը: Թաղևոսյանը միայն ավելի ուշ հասկացավ նրանց ստեղծագործական հայտնագործությունների արժեքը: Ընդ որում, նա սկսեց յուրացնել ոչ միայն գունային նորամուծությունները՝ պլեներային գեղանկարչության սկզբունքները, այլև՝ կոմպոզիցիոն կառուցումների համարձակությունը, իսկ հետագայում էլ նրա սերտ կապը ֆրանսիական իմպրեսիոնիզմի վարպետների արվեստի հետ առավել ակնդետ դրսևորվեց բազմաթիվ փայլուն էտյուդներում: Ընդհանուր առմամբ իմպրեսիոնիզմն օգնեց Թաղևոսյանին գտնաբերել գունազգացողության իր արտակարգ օժտվածությունը և մշակել իր գեղանկարչական անկրկնելի անհատականությունը:

Իմպրեսիոնիզմի ազդեցությունը Թաղևոսյանի վրա միանշանակ չէր և իմպրեսիոնիստների ոճով նկարելը ինքնանպատակ չէր: Նկարիչը վերցրեց միայն այն, ինչը կարող էր օգնել նրան սեփական մտահղացումները իրականացնելիս: Հարստացնելով իր գեղանկարչական լեզուն նոր հնարավորություններով, Թաղևոսյանը այնուամենայնիվ հավատարիմ մնաց ռեալիստական գեղանկարչության սկզբունքներին: Բայց դա յուրօրինակ ռեալիզմ էր, դրոշմված վարպետի վառ անհատականությամբ: Այդպիսի, իմպրեսիոնիստական ռեալիզմի գերազանց օրինակներ են՝ *Իմ երազներից մեկը (1905թ.), Նկարչի կնոջ դիմանկարը (1903թ.), Լոզանք Ալգետկա գետում*

(1900թ.), Մեր փողոցը Վաղարշապատում (1890-1921թթ.), Վենետիկ (1903թ.), Պուլկոյու (1907թ.), Արագած (1917թ.), Քրիստոսը և Փարիսեցիները (1922թ.), Կոմիտասը (1935թ.) և մի ամբողջ շարք այլ աշխատանքներ:

Եղիշե Թադևոսյանը մնաց անտարբեր XX դարի առաջին տասնամյակների բոլոր արմատական գեղարվեստական ուղղությունների նկատմամբ, արվեստի այդ բացառիկ, բուռն ու հեղափոխական դարաշրջանում: Շրջապատող աշխարհի տեսողաբար ընկալվող կերպարը կար և մնաց նրա արվեստի ստեղծման գլխավոր միջոցներից մինչև իր կյանքի վերջը, անկախ ժանրից: Այդպիսով հասկանալի է, որ նորագույն եվրոպական կերպարվեստի ուղղություններից նրան պետք է հետաքրքրեր հատկապես իմպրեսիոնիզմը, որի համար նույնպես հատկանշական էր տեսանելի աշխարհը ճշմարտացիորեն պատկերելու ձգտումը:

Իմպրեսիոնիզմը նրան օգնեց հաղթահարել 20-րդ դարի վերջի ռուսական ռեալիստական գեղանկարչության պայմանականությունը իր մուգ և ծանր կոլորիտով, այն գեղանկարչության, որի ավանդույթներով նա դաստիարակվել էր Մոսկվայի գեղանկարչության, քանդակի և ճարտարապետության ուսումնարանում: Իմպրեսիոնիզմը նպաստեց նրա գույնի ընկալման արտակարգ բնատուր շնորհի դրսևորմանը: Այն նրան օգնեց հասկանալ լուսաօդային միջավայրի օրինաչափությունները և գեղանկարչության մեջ նրա արտահայտման միջոցները: Միևնույն ժամանակ Թադևոսյանը չդարձավ իմպրեսիոնիզմի սովորական հետևորդ: Ուժեղ ստեղծագործական անհատականությունը, աշխարհայացքային պատկերացումների ազգային խորը բնույթը, բնության նրբին ընկալումը դարձան այն հիմքը, որոնք հնարավորություն ստեղծեցին վերանշակել իմպրեսիոնիզմի գեղարվեստական սկզբունքները և ձևավորել սեփական, անկրկնելի թադևոսյանական գեղանկարչական ոճը:

Ստեղծագործաբար յուրացնելով իմպրեսիոնիզմի լավագույն դասերը, Թադևոսյանը ստեղծեց աշխատանքներ, որոնք դարձան ֆրանսիական գեղանկարչության XIX դարի երկրորդ կեսի նվաճումների յուրատեսակ «թարգմանիչներ» և շատ առումներով նպաստեցին 1930-ից 1960-ական թվերին ստեղծելու հայ գեղարվեստի ազգային դեմքը:

#### ԳԼՈՒԽ 4

##### ՍԵՐՐԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԲՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄԸ

Մեր մեկ այլ դասական՝ խոշոր գեղանկարիչ Սեդրակ Առաքելյանի (1884-1942) գեղարվեստական ժառանգությունը ամբողջովին կապված է իմպրեսիոնիզմի հետ: Նա նույնպես, ինչպես Մարտիրոս Սարյանը, Վահրամ Գալֆեջյանը և Յովհաննես Տեր-Թադևոսյանը, կրթություն է ստացել ռուսական իմպրեսիոնիզմի այնպիսի կարկառուն ներկայացուցիչների մոտ, ինչպիսիք են Կորովինը և Արխիպովը:

Բնությունից օժտված լինելով հազվագյուտ գունազգացողությամբ, մեր վարպետը լիովին յուրացրեց իմպրեսիոնիստական համակարգը, դարձնելով այն իր յուրատեսակ անհատական գեղարվեստական լեզուն: Ինչպես և իմպրեսիոնիստների՝ այնպես էլ նրա արվեստի կենտրոնական առանցքն էր անմիջապես բնությունից նկարելը: Նրան նույնպես գրավում էր



շրջապատող միջավայրը հրաշալիորեն վերափոխող՝ լույսի ազդեցությունը, այսինքն՝ նաև գունային կերպարները:

Երիտասարդ հայ նկարչի հետաքրքրությունների ուղղվածությունը տվյալ խնդրի նկատմամբ, այսինքն՝ պլեների պրոբլեմն արդեն ամրապնդվել էր Թիֆլիսում, ուսման տարիներին, այնպիսի հիանալի վարպետների ազդեցությամբ, ինչպիսիք էին Ե.Թադևոսյանը և Բ.Ֆոգելը: Նրանք երկուսն էլ, մասնավորապես Եղիշե Թադևոսյանը, պլեներային գեղանկարչության արտակարգ վարպետներ են գույնի պրոբլեմի հանդեպ առանձնակի սուր հետաքրքրությամբ: Այդ հանգամանքը փաստորեն անդրադարձել է երիտասարդ նկարչի հետաքրքրությունների կողմնորոշման վրա:

Իմպրեսիոնիզմին հարազատեցնում էր նաև Առաքելյանի սերը դեպի պարզ մոտիվները, որով նա հայրենի բնության կերպարները կարողանում էր բանաստեղծորեն մեկնաբանել: Այդ ամենով հանդերձ հայ վարպետը չի հետևում նկարները կառուցելու իմպրեսիոնիստների մշակած գեղանկարչատեխնիկական եղանակներին: Այստեղ տարբերությունը առավել հստակ արտահայտվում է պատկերային ձևերի բնույթը մեկնաբանելիս, որոնք, համարձակ ընդհանրացումներով հանդերձ, Առաքելյանի մոտ կրում են հստակության, պարզության ու որոշակիության բնույթ (վերցնենք թեկուզ *Իջևան Երևանում* 1921թ. նկարը) հատկանիշներ, որոնք կախիպանվեն նրա ողջ ստեղծագործական ուղու ընթացքում: Ահա մեր խնդրին առնչվող՝ տարբեր ժամանակահատվածներում ստեղծված, Առաքելյանի գեղարվեստական ձիրքին ամենաբնորոշ բնանկարներից մի քանիսը. *Չորեն են չորացնում* (1920թ.), *Ձանգու գետի ափը* (1923-1924թթ.), *Գարուն*, *Այգին գարնանը* (1923թ.), *Ջրաղացի մետ* (1924թ.), *Նավակը գետափին* (1926թ.), *Սևան* (1930թ.), *Տեսարան Սևանա կղզուց* (1937թ.), *Ղին Գորիս* (1940թ.) և այլն:

Չարկ է նշել նաև, որ իմպրեսիոնիստների կողմից օգտագործվող տեխնիկական յուրահատկությունները գունային մշակման դիվիզիոնիստական կամ այլ կերպ տարանջատ վրձնահարվածի եղանակը նույնպես բացարձակապես օտար է Առաքելյանի գեղանկարչությանը: Միաժամանակ հայ վարպետի արվեստում իմպրեսիոնիզմին մերժեցնող կարևոր գեղանկարչական գծեր շատ կարելի է գտնել: Դրանք, առաջին հերթին, ստեղծագործական ակտի սկզբունքներն են՝ նկարի ստեղծումը ամբողջապես պլեներում, այսինքն բաց երկնքի տակ: Մյուսը ամենապարզ սյուժեներին և մոտիվներին հավատարիմ մնալը կամ այլ կերպ պատմողականության իսպառ բացակայությունը:

Ականավոր այս հայ վարպետի նրբագույն գունանկարչությունը դարձավ մեր գեղանկարչական դպրոցի ծանրակշիռ կռվաններից և Առաքելյանի ստեղծագործությունը փայլուն օրինակ է այն բանի, երբ իմպրեսիոնիզմի նշանավոր գեղարվեստական նվաճումների ակտիվ յուրացմամբ ստեղծվում է վառ ազգային դեմք ունեցող ինքնատիպ արվեստ:

## ԳԼՈՒԽ 5

### ՎԱՐՐԱՄ ՎԱՅՅԵՃՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄՊՐԵՍԻՈՆԻՍՏՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՉԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իմպրեսիոնիզմի գեղարվեստական ժառանգությանն առավել անկաշկանդ և բազմակողմանի ու ազատ էր մոտեցել **Վահրամ Գայֆեճյանը** (1879-1960): Իմպրեսիոնիզմին հարելը նրա մոտ փոփոխական ակտիվությամբ

էր ընթանում, մերթ մոտենալով, մերթ հեռանալով նրանից: Ինչպես և Սարյանը, նա նույնպես իմպրեսիոնիզմի ժառանգությանը ծանոթացավ ուսման տարիներին, ռուսական իմպրեսիոնիզմի միջնորդությամբ: Այնուհետև, գեղանկարչական արտահայտչական միջոցների ինքնուրույն որոնումները Գայֆեճյանին ընդհուպ մոտեցրին վերացական արվեստին, որն ընդգրկեց 1902-1906թթ.: Գայֆեճյանի համար այդ շրջանում գույնը վերածվեց գեղարվեստական մարմնավորման կարևոր գործոնի: Դրա փայլուն ապացույցն է երիտասարդ գեղանկարչի այդ տարիներին ստեղծած «դեկորատիվ մոտիվների» և, առավել ևս, «գունային կոմպոզիցիաների» վերացական թերթերի շարքերը, որոնք չէին կարող առաջ գալ առանց իմպրեսիոնիզմի հայտնագործությունների ազդեցության և նրանց դասերի յուրացման:

1911թ. հարազատ Ախալցխա վերադառնալուց հետո Վահրամ Գայֆեճյանի ստեղծագործական խնդիրները մոտեցան իմպրեսիոնիստական գեղանկարչությանը, քանի որ այդ շրջանում նրա համար ստեղծագործության ոգեշնչող տարր է դառնում անմիջապես բնությունից նկարելը, այսինքն՝ լույսի և պլեներային գեղանկարչության հետ կապված խնդիրների լուծումների որոնումները: (Ի դեպ այս ժամանակաշրջանին է վերագրվում նաև հայ գեղանկարչության ամենաիմպրեսիոնիստական կտավներից մեկի՝ *Կանացի դիմանկար (Բերտա Կամյու՞ն)*, ստեղծումը)<sup>2</sup>: Արդյունքում հայտնվեցին գեղանկարչական հիանալի գործեր, դառնալով մեր դասական արվեստի լավագույն նմուշներից: Նշենք օրինակ՝ արվեստաբանների և նկարիչների կողմից անչափ բարձր գնահատվող *Եղրևանին*, ստեղծված 1910-ականների կեսերին (ոչ ուշ քան 1916-ի գարունը):

Յետագայում էլ, ժամանակ առ ժամանակ, մեր վարպետը լուծում էր նմանատիպ խնդիրներ, իսկ 1930-ական թվականներից սկսած, նրա մոտ մշակվեց ընդգծված անհատական գեղանկարչական ձեռագիր՝ զուրկ արտաքին էֆեկտներից, հավասարակշռված և ներդաշնակ, միևնույն ժամանակ՝ տոգորված ռիթմի և չափի կատարյալ ներզգացումով ու գունային նրբագույն մշակումով: Ստեղծագործական այս փուլում արտաքնապես իմպրեսիոնիզմի սկզբունքների անմիջական ներկայությունը կարծես անհետանում է, այնինչ՝ այն բարերար կերպով ներգրավվում-ներծծվում է նկարչի յուրահատուկ տեսողության մեջ: Այս առումով, ասվածի փայլուն լուսաբանումն են հետևյալ հատկանշական օրինակները. *Գարնանային մոտիվ* և *Գարնանային էտյուդ* (երկուսն էլ՝ 1927թ.), *Աշմանային էտյուդ* (1936թ.), *Վաղ ծմեռ* (1947թ.) և այլն, ինչպես և, թերևս լավագույնս՝ *Չին երևանը*, նկարված 1951թ.:

Իմպրեսիոնիզմի հետ Վահրամ Գայֆեճյանի ստեղծագործության կապի խնդիրն ընդհանրացնելով կարելի է անել հետևյալ եզրակացությունը: Ֆրանսիացի վարպետների նվաճումները յուրացվել են նրա կողմից այնքանով, որքանով դա նրան թույլ է տվել մշակել իր սեփական գեղարվեստական լեզուն: Առավել լիարժեք այն դրսևորվեց իր ստեղծագործության երկրորդ շրջանում (1904-1924թթ.): Այդ ժամանակաշրջանի աշխատանքներում և առավել ևս ավելի ուշ (1925-1950-ական թթ.), Գայֆեճյանի գեղարվեստական տեսողությունը ձեռք

<sup>2</sup> Սոս՝ 1913թ.: Տե՛ս՝ *Гайфеджан Э.В.*, Ваграм Гайфеджан, Ер., «Тигран Мец», 2002г., стр.116: Այստեղ և հետագայում էլ Վահրամ Գայֆեճյանին վերաբերվող թվագրումներում կառաջնորդվենք ըստ էլլեն Գայֆեճյանի տված տարեթվերի:

է բերում բյուրեղային մաքրություն, իսկ կերպավորման եղանակները՝ արտակարգ հստակություն ու պարզություն, պահպանվելով անխտիր բոլոր գործերում, իսկ լավագույններում հասնելով հորինվածքի ու կոլորիտի կատարելության:

Գայֆեժյանի ստեղծագործական ժառանգությունը եղել ու մինչ օրս էլ մնում է գեղանկարչական հրաշալի դպրոց, որը զգալիորեն ոգեշնչված էր ֆրանսիացի ականավոր վարպետների արվեստի փորձով:

## ԳԼՈՒԽ 6

### ՍԱՐՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓԱՐԻԶՅԱՆ ՇՐՋԱՆԸ (1926-1928թթ.) ԵՎ ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԳԵՂԱՆԿՈՐՉԱԿԱՆ ԼԵՃՎԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՍԵՋ

Իմպրեսիոնիզմին հաղորդակցումը առանձնահատուկ էր մեր խոշորագույն վարպետներից **Սարտիրոս Սարյանի** (1880-1972) համար: Այստեղ նույնպես, ինչպես և Վահրամ Գայֆեժյանի դեպքում, արդեն իր դերն է ունեցել, այսպես կոչված, ժամանակային շեղումը և «ձգումը», երբ արվեստի պատմության հետիմպրեսիոնիստական շրջանում գեղարվեստական նոր ուղղությունների որոշակի կուտակումներ և շերտավորումներ էին ընթացել: Սկզբնական ծանոթացումն իմպրեսիոնիզմին կատարվեց ուսումնարանում սովորելու տարիներին, իսկ հետագայում, մոտ երկու տասնամյակ հետո, երբ Սարյանը հասուն վարպետ էր, նա կրկին վերաիմաստավորեց գեղանկարչական այդ բեղուն ուղղության նվաճումները: Սակայն, արդեն 1920-ականների սկզբից իսկ Ս. Սարյանի արվեստում նկատվում է որոշակի միտում ուղղված պայմանական-դեկորատիվ կերպավորման հաղթահարման: Դա արտահայտված է մի շարք բնանկարներում, ինչպես՝ *Արագածը* և *Արա լեռը* (1922թ.), *Արարատը Երևանից* (1923թ.), *Արևածաղը Արարատ լեռան վրա* (1923թ.) և այլն: Այդուհանդերձ, միայն ուշ շրջանում (սկսած փարիզյան շրջանից), Սարյանը կրճատելով արտահայտչալեզվի պայմանականությունը, հետամուտ եղավ իրական պատկերի գունային հատկությունների ավելի բազմակողմանի մեկնաբանման՝ կիրառելով գունատոնային հարուստ սանդղակ:

Սարտիրոս Սարյանի վերափոխված գեղարվեստական լեզվի յուրահատկությունների դրսևորման առաջին փորձերից են Փարիզում կատարված *Արվեստանոցի պատուհանից* (*Փարիզ*) (1926թ.) և Մառն գետը պատկերող երկու էտյուդները: Այստեղ հատկանշական են նաև անմիջապես Փարիզից վերադառնալուց հետո ստեղծված նկարները, որոնցում «ըստ ինքնեցիայի» պահպանվել են փարիզյան շրջանին բնորոշ նոր միտումները: Դրանցից են՝ *Երևանյան բակը գարնանը* (1928թ.), *Նախյուրմորտ. Երեխաներ* (1928թ.), *Հին Երևանի մի անկյուն* (1928թ.), *Սարիկը* և *Զարիկը* (1928թ.), *Իմ ընտանիքը* (1929թ.) և այլն:

Սարյանին գրավում էր իմպրեսիոնիստների արվեստի կենսական ուժը և արտահայտչալեզվի անմիջականությունը, իսկ ամենակարևորը՝ նրանց կենսախիճը արվեստում գույնի և լույսի դերը, որն օգնեց բացահայտել նկարչի օժտվածության և մի հուզական կողմ՝ շրջապատող իրականության զգայուն ու ինտիմ ընկալումն ու բանաստեղծորեն մեկնաբանումը:

## ԳԼՈՒԽ 7

### ՍԱՐՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԿՐՈՒԹՅՈՒՆ ԴՅՆՔԱՆՈՒՄ (1928-1950թթ.) ԵՎ ԻՄՊՐԵՍԻՈՆԻՋԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիական արվեստի և մասնավորապես իմպրեսիոնիզմի փորձի յուրացումը հայ մեծ նկարչին հնարավորություն ընձեռեց, պահպանելով իր ստեղծագործական մտածելակերպի աշխարհայացքային հիմունքները և իր գեղանկարչության ռճական անկրկնելիությունը, վերակառուցել ու հարստացնել սեփական արվեստի արտահայտչական հնարավորությունները: Որպեսզի հասկանալի լինի, թե ինչպիսի խորքային փոփոխություններ է կրել վարպետի արվեստը Փարիզում գտնվելու ընթացքում մենք կատարել ենք համեմատական վերլուծություն նրա երկու՝ *Բակ Երևանում (1925թ.)* և *Երևանյան բակը գարնանը (1928թ.)*, նկարների միջոցով, որոնց ստեղծման ժամանակը բաժանված է փարիզյան շրջանով: Փարիզյան շրջանում Սարյանի այս նորացված գեղարվեստական լեզուն հիմք դարձավ նրա ողջ հետագա, երկար և բեղմնավոր ստեղծագործական գործունեության, որի ընթացքում նա ստեղծել է բազում փայլուն գլուխգործոցներ: Թվարկենք դրանց մի մասը միայն՝ *Երևանյան բակը գարնանը (1928թ.)*, *Նատյուրմորտ. Երեխաներ (1928թ.)*, *Իմ ընտանիքը (1929թ.)*, *Ջանգլի ափերը Երևանում, (1930թ.)*, *Ջանգու զետի կամուրջը (1930թ.)*, *Գեղանկարիչ Ստեփան Աղաջանյանի դիմանկարը (1930թ.)*, *Բանջարանոցների ջրումը (1933թ.)*, *Աշտարակ (1933թ.)*, *Հարավային ծմեռ (1934թ.)*, *Անձրև մայիսի սկզբին (1942թ.)*, *Ակադեմիկոս Դովսեյի Օրբելու դիմանկարը (1943թ.)*, *Արարատ (1945թ.)* *Արարատը և Զոփոսիսեն (1945թ.)*, *Արարատը Մխչյան գյուղից (1949թ.)* *Նատյուրմորտ: Ծաղիկներ: Հայրենական պատերազմի հայ մարտիկներին (1945թ.)*, *Բջնի: Անրի (1946թ.)* և շատ ուրիշներ:

Սարյանի հետփարիզյան շրջանի ստեղծագործությունները չի կարելի թերագնահատել հոգուտ նրա վաղ շրջանի աշխատանքների: Դժվար է պատկերացնել Սարյանի հանճարն առանց նրա ժառանգության այս մասի: Եվ էլ ավելի դժվար է առանց դրա պատկերացնել XX դարի հայ արվեստը: Բացի այդ, վարպետի այս ստեղծագործություններում բացահայտված է նոր, մինչ այդ մեզ անծանոթ Սարյանի աշխարհընկալումը, որն առանձնանում է յուրահատուկ անմիջականությամբ, բանաստեղծական նրբությամբ և ներանձնական զգայնությամբ:

Այսպիսով, իմպրեսիոնիզմի նվաճումներին առնչվելով, Սարյանը նոր գեղանկարչական միջոցներով հարստացրեց և նորացրեց իր հրաշալի գեղարվեստական ժառանգությունը, որն էլ և ապացուցում են նրա փարիզյան և հետփարիզյան շրջանի լավագույն գործերը:

## ԳԼՈՒԽ 8

### ԴՈՎՅԱՆՆԵՆ ՏԵՐ-ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԿՐՈՒԹՅՈՒՆ ԻՄՊՐԵՍԻՈՆԻՋԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

Իմպրեսիոնիստական սկզբունքների յուրացման և ստեղծագործական մեկնաբանման գերազանց օրինակ է **Դովհաննես Տեր-Թաղևոսյանի** (1889-1974) գարնանահրաշ գեղանկարչությունը: Այս նկարչի ստեղծագործությունների գեղարվեստական բարձր որակը և մեզ համար սկզբունքային նշանակություն կրող իմպրեսիոնիզմի գեղարվեստական սկզբունքների բազմակողմանի ու լիարժեք օգտագործումը, հատկապես, պլեների խնդիրների առնչությամբ՝

լույսի ակտիվ դերը, բազմերանգությունը, գունային համարձակ ընդհանրացումները և նուրբ մշակումները, նրա գեղանկարչությունը դարձնում են մեր աշխատության կենտրոնական էջերից:

Յովհաննես Տեր-Թադևոսյանի ստեղծագործությունը հասունացել է բավական վաղ, որի ապացույցն են նրա հրաշալի էտյուդներն, ակնհայտորեն կատարված թիֆլիսի գեղարվեստական ուսումնարանում սովորելիս նրա ուսուցչի՝ Եղիշե Թադևոսյանի էտյուդների անմիջական օրինակով ու ներշնչանքով:

Յետագա ուսման՝ Մոսկվայի գեղակարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, տարիների էտյուդները վկայում են Տեր-Թադևոսյանի էլ ավելի հմտանալը պլեներային գեղանկարչության սկզբունքների յուրացման, կոմպոզիցիոն համարձակ կառուցումներ անելու, բնանկարում գույնի ազատ ու անկաշկանդ մեկնաբանման մեջ, որոնցում վառ արտահայտվեց թե՛ նկարչի կուրրիստական անզուգական օժտվածությունը, թե՛ նրա կողմից պլեներիզմի սկզբունքների լիակատար յուրացումը: Վկայակոչենք ամենաբնորոշ օրինակներից մի շարք՝ *Յավաբուն (1910թ.)*, *Քրդերը հրապարակում (1914թ.)*, *Բաթում: Ծառերի տակ (1913թ.)*, *Բաթում: Առափնյա փողոց (1913թ.)*, *Փոքր Առազատանավը (Ֆելյուզա) բեռնաթափելիս: «Տրապիզոն» շարքից (1914թ.)*, *Իջևանատունը: «Յին Սամարղանդը» շարքից (1917թ.)*, *Տոնավաճառ: «Յին Սամարղանդ» շարքից (1917թ.)* և այլն:

Ընդհանրապես, շրջապատող աշխարհի ընկալման կրթոտ անմիջականությունը Յովհաննես Տեր-Թադևոսյանի ստեղծագործական խառնվածքի ամենավառ և հիմնավոր հատկություններից է: Յենց դա է միշտ պայմանավորել նրա ստեղծագործությունների գեղարվեստական բարձր մակարդակը ստեղծագործական բոլոր փուլերում: Գեղանկարչական արտահայտչալեզվի այս հատկությունները բնորոշ կմնան նրան ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Իր տաղանդի հենց այս հիմնարար կողմն է Յովհաննես Տեր-Թադևոսյանի արվեստը մոտեցնում ֆրանսիական իմպրեսիոնիզմի վարպետների մեծ արվեստին:

Լինելով Սեդրակ Առաքելյանի ուսանողական ընկերը, թե՛ թիֆլիսում՝ Եղիշե Թադևոսյանի ղեկավարությամբ սովորելիս, թե՛ հետագայում էլ Մոսկվայում, նա միևնույն միջավայրում իր հրաշալի ուսուցիչներ Կորովիևից և Արխիպովից ժառանգել է գեղանկարչական հմտության անգնահատելի դասեր, որոնք այնուհետև նկարչին օգնեցին կազմակերպել գեղարվեստական կրթության սաղմերը Երևանում<sup>3</sup>, իսկ հետագայում էլ՝ Ուզբեկստանում<sup>4</sup>:

Ցավոք սրտի այս հետաքրքիր գեղանկարչի ստեղծագործական ամբողջական պատկերը մենք չունենք, սակայն մեր տրամադրության տակ եղած նյութն էլ արդեն հստակ խոսում է այն մասին, որ վարպետն իր բացառիկ բեղուն ու բազմակողմանի ստեղծագործության մեջ, ըստ իր խառնվածքի անընդմեջ գտնվում էր անհանգիստ որոնումներում, չնայած՝ երբեմն տրվում ծայրահեղությունների և ստեղծագործական անհաջող փորձեր անում:

Այնուամենայնիվ, մեր նկարչի լավագույն աշխատանքների բարձր գեղարվեստական որակը, հարուստ և չափազանց նուրբ գուներանգային

<sup>3</sup> Տե՛ս *Գալֆեդյան, Յ.Վ.*, Ованес Тер-Тадевосян, Ереван, «Тигран Мец», 2010, с.19-20.

<sup>4</sup> Տե՛ս՝ նույն տեղում:

